600.0139.13.05.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 մայիսի 2019 թվականի №139Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի №156Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, «ՋՈԴ ՈՒԻՆԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0620 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՋՈԴ ՈՒԻՆԴ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի մայիսի 7-ին դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 6 ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 16-ի «ՋՈԴ ՈՒԻՆԴ» փակ բաժնետիրական ընկերությանը «Ջոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №156Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Ջոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0620 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0620 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) համաձայն Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 76-րդ կետի՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է 6 աշխատանքային օր առաջ,

գ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում տեղակայված տեղեկատվության համաձայն 2019 թվականի մարտի 6-ին տեղի է ունեցել Ընկերության գտնվելու վայրի փոփոխություն,

դ) Կարգի 90-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ կցելով տեղեկություններ պետական գրանցման համարի (պետական հաշվառման համարի) վերաբերյալ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, մինչդեռ Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում չի դիմել Հանձնաժողով՝ ԼԷ №0620 լիցենզիայի վերաձևակերպման համար,

ե) Հանձնաժողովը 2019 թվականի մայիսի 8-ից Կարգի 76-րդ և 90-րդ կետերի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի շրջանակում Ընկերությունը 2019 թվականի մայիսի 10-ի գրությամբ ըստ էության ընդունել է կատարված խախտումները, և միևնույն ժամանակ խնդրել վերաձևակերպել ԼԷ №0620 լիցենզիան,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 76-րդ և 90-րդ կետերի պահանջները, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Վեց ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 16-ի «ՋՈԴ ՈՒԻՆԴ» փակ բաժնետիրական ընկերությանը «Ջոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №156Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0620 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2019 թվականի մայիսի 16-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի նոյեմբերի 16-ը» բառերով:

2. Վերաձևակերպել ԼԷ №0620 լիցենզիան՝ դրա պայմաններում «գտնվելու վայրը» տողը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Պուշկինի փողոց 21/3»:

3. Կարգի 76-րդ և 90-րդ կետերի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

4. Ընկերությանը՝ ԼԷ №0620 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Զոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի մարտի 6-ի №O.AB.100.11CB.ESC.2.1137.18 գրությամբ Հանձնաժողով ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված 3,300,000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) դրամ գումարից 1,650,000 (մեկ միլոն վեց հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 3,300,000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործողության ժամկետով:

5. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մայիսի 16-ից, բացառությամբ որոշման 2-րդ և 3-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում համապատասխանաբար 2019 թվականի մայիսի 14-ից և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
13 մայիսի 2019թ.